ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 հուլիսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

102
(2952)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ

Հուլիսի 23-ին «Հետքը» քննարկում էր կազմակերպել «Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը Հայաստանում» թեմայով, որին մասնակցում էին Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ Սիրո Ամիրխանյանը, Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ Տաթեւիկ Սարուխանյանը, հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչներ, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ Արամայիս Փաշինյանը, պետական գույքի կառավարման կոմիտեի, պետական վերահսկողական ծառայության, հասարակական սեկտորի եւ մեդիայի ներկայացուցիչներ:

Կլոր սեղանի քննարկման կիզակետում էին Հայաստանի ներկա եւ նախկին պաշտոնյաների կողմից ապօրինի ձեռք բերված գույքերի վերաբերյալ մամուլի հայտարարությունները եւ իրավական ոլորտի կառույցների անդրադարձները:

Դատախազությունը պնդում է, որ լավ է աշխատում, եւ արդեն իսկ կան հաշտության համաձայնություններ, կայացված դատական ակտեր:

Սիրո Ամիրխանյանը նշեց, որ հիմնական խնդիրները կապված են պաշտոնյաների՝ արտերկում ունեցած գույքի բռնագանձման հետ, քանի որ որոշ երկրներ պատրաստակամ չեն համագործակցելու: Որպես չհամագործակցող երկիր՝ Ամիրխանյանը նշեց Արաբական Միացիալ Էմիրությունները, որը ոչ մի կերպ չի համագործակցում Հայաստանի իրավական կառույցների հետ, ինչն էլ դժվարեցնում է աշխատանքը:

Քննարկումը վարող, «Հետք»-ի լրագրող Գրիշա Բալասանյանը հարցրեց, թե ինչ սկզբունքով են ընտրում ում գույքն ուսումնասիրել, քանի որ մինչեւ այս պահը տպավորություն էր, թե միայն նախկին պաշտոնյաների վերաբերյալ են ուսումնասիրություններ կատարվում: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետը հայտնեց, որ գործող պաշտոնյաների վերաբերյալ եւս կան ապօրինի գույքի բռնագանձման պահանջով գործեր, սակայն ուսումնասիրություններն իրականացվում են ժամանակագրական հաջորդականությամբ, այդ պատճառով դեռեւս միայն նախկին պաշտոնյաների վերաբերյալ գործերն են հասել դատարան: Ամիրխանյանը վստահեցրեց, որ գործող պաշտոնյաների վերաբերյալ գործերի մասին եւս պատշաճ իրազեկում կլինի:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Հայաստանյան արեւմտամետ ուժերից ձեւավորված «Ժողովրդավարական ուժերի հարթակ»-ը մտադիր է օգոստոսին ստորագրահավաք անցկացնել՝ ԵՄ-ին անդամակցության հարցը հանրաքվեի դնելու պահանջով: Ինչպես ավելի վաղ հայտնել էինք, այս հարթակը դիմել էր ԱԺ՝ հանրաքվե անցկացնելու առաջարկով, սակայն, Նիկոլ Փաշինյանը մերժեց իր սատելիտ պրոարեւմտյան քաղաքական ուժերին եւ հուլիսի 1-ին կայացած «Ժողովրդավարության հայկական ֆորում»-ի ժամանակ հայտարարեց, որ Հայաստանը ԵՄ-ին անդամակցելու համար հանրաքվե չի անցկացնի, քանի որ ինքը, որպես երկրի ղեկավար, արդեն իսկ գիտի ՀՀ ժողովրդի կարծիքը: Փաստորեն, Փաշինյանից մերժում ստանալուց հետո՝ պրոարեւմտյան ուժերը որոշել են Հայաստանում ստեղծված հակառուսական մեծ ֆոնին դիվիդենտներ հավաքել հանրության շրջանում: Մտադիր են ստորագրահավաք սկսել, 50.000 ստորագրություն հավաքել եւ դա որպես հանրային պահանջ ներկայացնել խորհրդարանին, որպեսզի ԱԺ-ն ընդունի Հայաստանում ԵՄ-ին անդամակցելու մասով հանրաքվե անցկացնելու նախագիծը: «Հայաստանի Եվրոպական» կուսակցության ղեկավար Տիգրան Խզմալյանը, ով «Ժողովրդավարական ուժերի հարթակ»-ի անդամ է, ArmLur.am-ին հայտնել է, որ օգոստոսի կեսերին մտադիր են ստորագրահավաքը սկսել, եւ քանի որ գործընթացն ունի ժամկետ՝ 45-60 օր, սեպտեմբերի վերջին նախատեսում են ավարտել այն: Հավաքված 50 հազար ստորագրությունը կներկայացնեն ԱԺ՝ իբրեւ ԵՄ անդամակցության հարցով հանրաքվե ներկայացնելու նախագիծ-պահանջ: Ճիշտ՝ «Հայաքվեի» նախագծի օրինակով, որը իշխող ՔՊ-ի ջանքերով տապալվեց ԱԺ-ում նախորդ տարի:

Պաշտոնական փաստաթղթերից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի լուսանկարիչների եւ օպերատորների թիվը գործուղումների ժամանակ ավելի մեծ է, քան դիվանագետներինը: Հատկապես Գերմանիայի՝ մասնավոր, ապա աշխատանքայինի վերածված այցից հետո «Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել վարչապետի ու նրա շքախմբի գործուղումների շարժը: Փաստաթղթերից պարզ է դառնում, որ բյուջեի վիթխարի դեֆիցիտ ունեցող Փաշինյանը իր հետ տարել է միանգամից երկու լուսանկարչի եւ երկու օպերատորի, թե ինչ հիմնավորմամբ՝ պաշտոնական փաստաթղթերում չի նշվում: Գուցե կառավարական լուսանկարիչներից ու օպերատորներից մեկը Փաշինյանի տիկին Աննա Հակոբյանին հատկացված լուսանկարիչն ու օպերատորն է, սակայն դա պաշտոնապես ճշտել չհաջողվեց:



Երիտասարդ Սամվել Վարդանյանին խոշտանգելու զազրելի դեպքից անցել է 3 ամիս, ու որեւէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել: Այդպես էլ անհայտ է մնում՝ ով կամ ովքեր ոստիկանների աչքի առաջ նսեմացրին, խոշտանգեցին երիտասարդին: Ինչպես հայտնի է՝ ապրիլի 15-ին հանրային տրանսպորտում երիտասարդ Սամվել Վարդանյանը, տեսնելով ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հակոբ Ասլանյանին, նրան թիրախավորել էր՝ անվանելով «ժեխ բիձա», «դավաճան»: Դեպքից հետո նրան ձերբակալեցին, իսկ քննչականից ձերբակալվածների պահման վայր տեղափոխելու ճանապարհին՝ երիտասարդին դիմակավորված բանդան ծեծել էր, խոշտանգել, սեռական նվաստացման ենթարկել: Այս պահի դրությամբ՝ պատգամավորի նկատմամբ նման վարք դրսեւորելու համար Սամվել Վարդանյանի նկատմամբ առաջադրված 2 մեղադրանքների՝ «խուլիգանություն եւ քաղաքական հայացքներով պայմանավորված թշնամանք հարուցելու մասով» քննությունն արդեն ավարտվել է, եւ գործը դատարանում է: Սակայն, երիտասարդին խոշտանգելու գործով մինչեւ օրս ոչինչ չի արվել. չի պարզվել՝ ովքեր էին ուղեկցող ոստիկանները, դիմակավորված բանդայի անդամները, եւ ինչ պատիժ է սպասվում նրանց: Հիշեցնենք, որ քննչական ծառայությունից ՁՊՎ տեղափոխելու ճանապարհին՝ ամբողջությամբ սեւ հագած եւ դիմակավորված անձինք մեքենայից դուրս էին հանել Սամվել Վարդանյանին, տարել մի քանի մետր այն կողմ՝ խոտերի մեջ, ջոքեցրել էին, գլուխը հարվածել գետնին (ըստ երեւույթին՝նրա ճակատի ուռածությունը հենց այդ դեպքի հետեւանքն էր): Սկսել էին ձեռքերով հարվածել. այդ ամբողջ գործընթացը ուղեկցվել էր սեռական բնույթի հայհոյանքներով, վերջին խոսքերով: Ընդ որում, ծեծողները պահանջել էին Սամվելից, որ կրկնի իր նկատմամբ հնչեցված սեռական բնույթի հայհոյանքները. հետո խմբով թքել էին նրա վրա: Այնուհետեւ, նրան ջոքած վիճակում պահելով, ձեռքերը հետեւի կողմից ձեռնաշղթայված՝ տաբատը իջեցրել էին, փայտը կամ «դուբինկան» դեմոնստրատիվ պահել ոտքերի արանքում՝ այդպիսով ցանկանալով ինչ-որ բան ցուցադրել, սպառնալ կամ վախեցնել: Եվ այս արարքը, թերեւս, Նիկոլ Փաշինյանի բարձր հովանու ներքո, չի բացահայտվում եւ մեղավորները չեն պատժվում:

ԶՐՈՒՅՑ

ՄԵԾ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ՉՈՒՆԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ

ԱԺ Հայաստան խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանն «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմում է՝ Սրբազան շարժման առաջնորդները եւ աջակիցներն այս օրերին ճնշումների են ենթարկվում:

Պատգամավորի խոսքով՝ օրեր առաջ Նորատուսում շարժման մասնակիցներից մեկի մենքենան կոտրել են, իսկ հենց երեկ (խմբ.) իրեն տուգանել են Աբովյան քաղաքում, ոստիկանն էլ, պատճառները բացատրելու փոխարեն, ասել է՝ ինչ արել եմ, լավ եմ արել:

Գառնիկ Դանիելյանը զրույցի վերջում նշեց՝ սեպտեմբերից շարժումը նոր թափով վերսկսելու է հանրահավաքներն ու ակցիաները: ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմում է՝ Սրբազան շարժման առաջնորդները եւ աջակիցներն այս օրերին ճնշումների են ենթարկվում:

-Պարոն Դանիելյան, երկու օր առաջ հայտարարվեց, որ ընդդիմությունը ցանկանում է հանձնաժողով ստեղծել, որը կուսումնասիրի հունիսի 12-ին Ազգային ժողովի դիմաց տեղի ունեցած բախումները: Գիտենք, որ Ազգային ժողովում բազմաթիվ հանձնաժողովներ կան, թե՛ 44-օրյա, թե՛ քառօրյա պատերազմներն ուսումնասիրող, եւ թե այլ դեպքերը հետազոտող. սակայն սրանցից ոչ մեկը իր նպատակին չի հասել: Ի վերջո, բուն խնդիրը չի բացահայտվել: Այս հանձնաժողովը ի՞նչ է տալու: Հույս ունե՞ք, որ իսկապես դեպքերի արդար ուսումնասիրություն է լինելու:

-Անձամբ ես մեծ ակնկալիքներ չունեմ: Դա ընդդիմության նախաձեռնությունն է, սակայն, ըստ դրվածքի, հանձաժողովներում մեծամասնությունը միշտ ՔՊ-ականներն են լինում, հետեւաբար, ես որեւէ լուրջ արդյունք չեմ ակնկալում: Հակառակ դրան՝ հանձնաժողովի գործունեությունը առիթ է ուժայիններին կանչելու հանձնաժողով եւ բացատրություն պահանջելու իրենց արարքների համար: Սա առիթ է, որ հանրությունն էլ տեսնի, որ այդ մարդիկ կիրառում են անօրինական հատուկ միջոցներ:

Տարբեր կազմակերպություններ դա նշել են իրենց զեկույցներում եւ կարեւոր է, որ հասարակությունը տեսնի, որ երկրի ղեկավարը երկրի թիվ մեկ ամբիոնից ասում է, թե ոստիկանությունը իրավունք ունի բիրտ ուժ կիրառելու եւ հավանություն է տալիս խոշտանգումներին այն դեպքում, երբ 2018 թվականին ասում էր, որ հատուկ միջոցների կիրառումն անընդունելի է. երբ ես գնում եմ իմ աշխատանքին, եւ իմ ազատ տեղաշարժի իրավունքը ոտնահարվում է՝ նշանակում է, որ ընտրովի արդարադատության հետ գործ ունենք: Այս արատավոր երեւույթը պետք է չլինի Հայաստանի Հանրապետությունում եւ սրա դեմ պայքար պիտի մղվի: Հետեւաբար, հանրությունը պիտի տեսնի, որ այս իշխանությունն իր ուսերին եւս մեկ քրեական գործ ունի:

-Արդյոք իշխանական պատգամավորները համաձայնություն տվե՞լ են հանձնաժողովի գոյությանը, քանի որ առանց նրանց՝ այն չի կարողանա կյանքի կոչվել:

-Մենք գործընթացը նախաձեռնում ենք: Այս պահին մանրամասներին չեմ տիրապետում, քանի որ կոլեգաներս են գործընթացում, սակայն հասարակությունն անպայման տեղյակ կլինի մանրամասներից:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ի՞ՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ՔՊ-ԱԿԱՆ Ս. ԽԱՆԴԱՆՅԱՆԸ

ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սարգիս Խանդանյանը խորհրդարանի պատգամավոր է ընտրվել 2021 թվականի հունիսի 20-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համաազգային ընտրական ցուցակով:

Մինչեւ պատգամավոր դառնալը Խանդանյանը, ինչպես պատգամավորների մեծամասնությունը, նախկին լրագրող է եղել: Նա 2010-2015 թվականին աշխատել է «Սիվիլիթաս» հիմնադրամի «Սիվիլ-Նեթ» առցանց հեռուստալիքի լրագրող որպես, «Ժողովրդի ձայնը» հաղորդաշարի հեղինակ: 2014-2015 թվականներին եղել է «Change.org» կազմակերպության Արեւելյան Եվրոպայի գրասենյակի մեդիա արշավների, հաղորդակցության եւ հանրային կապերի պատասխանատու, մասնակցել է «Հրանտ Դինք» հիմնադրամի «Սահմաններից վեր» փորձի փոխանակման ծրագրին:

2015-2016 թվականներին եղել է Հայկական բարեգործական ընդհանուր միության հաղորդակցության եւ հանրային կապերի պատասխանատու:

Քաղաքականություն է եկել 2018 թվականի հեղափոխությունից հետո եւ, ինչպես շատ ՔՊ-ականներ, ձեռք է բերել եւ դարձել անշարժ գույքի սեփականատեր:

2023 թվականի հաշվետու տարվա՝ անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի համաձայն՝ Սարգիս Խանդանյանը տարեսկզբին հայտարարագրել է 1 անհատական բնակելի տուն եւ 1 բնակարան բազմաբնակարան շենքում՝ համատեղ սեփականությամբ, որոնք գտնվում են Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում, ձեռք են բերվել 1991 եւ 1995 թվականներին:

Տվյալ տարվա ընթացքում՝ 2023 թվականին, պատգամավորը ձեռք է բերել նոր բնակարան եւ ավտոկայանատեղի միանձնյա սեփականությամբ, որը գտնվում է Երեւան քաղաքում եւ արժեցել է 29.8 մլն դրամ:

Անշարժ գույքը ձեռք է բերվել «Միկշին» ՍՊԸ-ից, որի հիմնադիրը՝ Տիգրան Հարությունյանը, ինչպես «Հետքը» գրել էր, նախկինում եղել է «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի սեփականատերը, որն այժմ պատկանում է համայնքին: Հավելենք, որ թերթը գրել էր՝ Տիգրան Հարությունյանը ԴԱՀԿ ծառայության նախկին պետ, գեներալ-մայոր Միհրան Պողոսյանի քեռու՝Միխաիլ Հարությունյանի որդին է եւ ԱԺ նախկին (2017-2019 թթ.) պատգամավոր, ՀՀԿ-ական Վահան Հարությունյանի եղբայրը:

Խանդանյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել:

Պատգամավորի հանձնված եւ վերադարձված փոխառությունները ՀՀ Քաղաքաշինության կոմիտեից տարեսկզբին կազմել են 4,2 մլն դրամ, սակայն տարեվերջին զրոյացել են:

Սարգիս Խանդանյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 3,6 մլն դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 18 մլն 152 հազար դրամ, որից 11 մլն 685 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից, 4 մլն 296 հազարը վարկ է «Արդշինբանկ» ՓԲԸ-ից: Եկամուտների 2 մլն 170 հազար դրամը պատգամավորը տացել է ՀՀ ֆինանսների նախարարությունից, որը եկամտահարկի վերադարձի օրենքով բնակարանի եւ ավտոկայանատեղու հիփոթեքի մայր գումարի մնացորդը մարելու համար է, իսկ ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը, որը բնակարանի եւ ավտոկայանատեղու հիփոթեքի մայր գումարի մնացորդն է, հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 25 մլն 543 հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՀՆԴԿԱԿԱՆ ՋԵՆՔԻ ԳՆՈՐԴ

Հայաստանը դարձել է Հնդկաստանից զենք ձեռք բերող ամենախոշոր գնորդը:

Հնդկական IADN լրատվականի տարածած հաղորդագրության համաձայն՝ Հայաստանի կողմից Հնդկաստանից զենքի գնման ընդհանուր ծավալը 2024-2025 թվականների ֆինանսական տարում հասել է 600 միլիոն դոլարի:

ԶԱԽԱՐՈՎԱՆ՝ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

ՌԴ ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովան պատասխանել է լրագրողի այն հարցին թե ինչպես է Մոսկվան գնահատում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարությունը, որ Հայաստան-Ադրբեջան խաղաղության պայմանագիրը պատրաստ է 80-90%-ով:

Զախարովան, մասնավորապես, պատասխանել է. «Պատրաստ ենք այսուհետ եւս երաշխավորել հարմար հարթակի տրամադրում կողմերի համար՝ նախընտրելի երկկողմ ձեւաչափով բանակցությունների համար: Մեր երկու դաշնակիցների միջեւ հավասարակշռված համաձայնագրի կնքումը դիտարկում ենք որպես խաղաղության ճարտարապետության հիմք: Եվ այն պետք է կառուցեն տարածաշրջանի երկրները, ոչ ոք դրսից: Հարավային Կովկասի ապագան պետք է որոշեն բացառապես տարածաշրջանի երկրներն ու հարեւանները»:

Զախարովան անդրադարձել է նաեւ ԵՄ-ի՝ Հայաստանին ռազմական աջակցություն տրամադրելուն եւ նշել, որ 10 միլիոն եվրո ուղղելով Հայաստանի զինված ուժերին՝ Եվրամիությունը ակնկալում է իր կործանարար ազդեցությունը տարածել Անդրկովկասում:

«Հայաստանի զինված ուժերին աջակցելու համար 10 միլիոն եվրո ուղարկելու Եվրամիության ծրագրերի ետեւում, իհարկե, կան ԵՄ-ի աշխարհաքաղաքական հաշվարկները՝ իր ավերիչ ազդեցությունն այս տարածաշրջանում, այսինքն՝ Անդրկովկասում, մենք վստահ ենք:

Սա, ինձ թվում է, նույնիսկ ակնհայտ է, եւ դա երեւում է Ուկրաինայի ուղղակի օրինակով, որ, այսպես կոչված խաղաղության եվրոպական հիմնադրամը, խաղաղության, կայունության, անվտանգության մասին չէ. դա երկրներին պատերազմ հրահրելու, արյունահեղության մասին է»,- ճեպազրույցի ժամանակ ասել է Զախարովան:

ԿՈՆՖԼԻԿՏԻ ՊԱՏՃԱՌ

««Ժեշտից «անվտանգությունը» նիկոլի սարքած ճանապարհին». այս մասին իր էջում գրել է Աճարկուտի ավագանու անդամ Կարեն Ղազարյանը:

«Կիրանցով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհը հանցագործ խունտայի կողմից թշնամուն հանձնելուց հետո՝նոր ճանապարհ են սարքում:

Այն անցնում է թշնամու հետ անմիջական շփումով, որը, ի դեպ, արդեն իսկ կոնֆլիկտի պատճառ է դարձել հայ եւ թշնամու սահմանապահների միջեւ»,- նշել է նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

6 ՏԱՐԻ ՔԱՆԴԵԼ ԵՆ, ԲԱՅՑ ՈՉԻՆՉ ՉԵՆ ՍԱՐՔԵԼ

«6 տարի, լավ օրվա խոստումով, քանդել են համակարգեր, ինստիտուտներ, բայց դեռ ոչինչ չեն սարքել»: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ԱԺ ընդդիմադիր պատգամավոր Տիգրան Աբրահամյանը:

«Անվտանգությունից մինչեւ արտաքին քաղաքականության ճարտարապետություն Հայաստանում տարել են փորձարկումների եւ արկածախնդրության ճանապարհով, իսկ հետեւանքը Հայաստանում ապրող մարդն անձամբ զգացել է սեփական մաշկի վրա՝հայրենիքի ու մարդկային կորստից մինչեւ արժանապատվության ոչնչացում:

Ստեղծված իրավիճակում ի՞նչ է առաջարկի կամ սկսի իշխանությունը՝ մեր քաղաքացիների համար ոչ միայն սպասելիքների առումով են զրոյական, այլ ավտոմատ ողբերգության կանխատեսումներ են ձեւավորում»,- գրել է նա:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը ներկայացրել է քաղաքապետարանի կողմից այս տարվա առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները:

Նա անդրադարձել է նաեւ փողոցների ասֆալտապատմանն ու անձրեւներից հետո առաջացած հեղեղումներին. «Այս տարի աննախադեպ ծավալի՝ փոսերի նորոգման, միջին նորոգման աշխատանքների ենք իրականացրել»: Ըստ Ավինյանի՝ տարեվերջին ճանապարհային ցանցի վիճակն էականորեն ավելի լավ է լինելու, քան մինչ այդ է եղել:

Խոսելով հեղեղումների մասին՝ քաղաքապետն ասել է, թե հեղեղատարների շահագործման ու սպասարկման պատասխանատուն «Վեոլիա ջուր» ընկերությունն է, բայց քաղաքապետարանը գույքագրել է հեղեղատարների վիճակը. «Առաջինը, որ առաջարկել ենք կառավարությանը, պայմանագրի վերանայումն է, ինչը թույլ կտա քաղաքապետարանին, միգուցե, նաեւ ընկերությանը, էական ծավալի ներդրումներ իրականացնել ջրային համակարգերում: Այս առաջարկը քննարկվում է, եւ վստահ եմ՝ հենց այս տարի լուծումներ կսկսենք ունենալ»:

4,2 ՄԻԼԻԱՐԴ ԵՎՐՈՅԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԿԻԵՎԻՆ

ԵՄ դեսպանները համաձայնել են Եվրամիությունից Կիեւին հատկացնել 4,2 միլիարդ եվրո բյուջետային աջակցության այս տրանշը, ասված է ԵՄ խորհրդի Հունգարիայի նախագահության հայտարարության մեջ:

Հաջորդ քայլը կլինի այս որոշման հաստատումը ԵՄ խորհրդի կողմից գրավոր ընթացակարգով:

Ըստ գրավոր ընթացակարգի՝ ԵՄ խորհուրդը հաստատում է որոշումներ, որոնք քննարկում չեն ենթադրում:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՈՎ Է ԴԱՏԱՎՈՐԸ ԵՎ ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ալեն Սիմոնյանի հարսի գործով դատավորին ԱԺ նախագահը ծաղիկներ է ուղարկել. դատավորը վրդովված է: Մեր տեղեկությունների համաձայն՝ էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանի, հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրոջ ու այլ անձանց մասով գործը մակագրվել է հենց նույն՝ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Մերի Մոսինյանին:

Իսկ ո՞վ է Մերի Մոսինյանը եւ ի՞նչ ունեցվածք ունի. երիտասարդ դատավորը 2016 թվականին գերազանցությամբ ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը: Մոսինյանը 2017-2018 թվականներին աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Դատական համակարգում 7 տարվա փորձ ունեցող Մերի Մոսինյանն այսօր քննում է Ալեն Սիմոնյանի հարսի գործը: Նա նաեւ Անի Գեւորգյանին կալանքի տարած դատավորն էր:

Մերի Մոսինյանը սեփական անշարժ գույք եւ տրանսպորտային միջոց չի հայտարարագրել, սակայն 2023 թվականի՝ եկամուտների, անշարժ գույքի, շահերի եւ ծախսերի տարեկան հայտարարագրի համաձայն՝ Մոսինյանն ունի սեփականության իրավունքով իրեն չպատկանող, բայց իր կողմից շահագործվող մեկ բնակարան Երեւան քաղաքում: Նույն սկզբունքով Մոսինյանը հայտարարագրել է նաեւ Toyota մակնիշի մեքենա այլ անձի պատկանող եւ իր կողմից շահագործվող:

Դատավորի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 4.6 մլն դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 1 մլն դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 15 մլն 330 հազար դրամ, որից 15 մլն 278 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի դատական դեպարտամենտից, իսկ 52 հազար 163 դրամը աշխատանքի վարձատրություն է Արդարադատության ակադեմիայից:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 44 հազար 853 դրամ:

Հարկ է նշել, որ 2022 թվականի եկամուտների, անշարժ գույքի, շահերի եւ ծախսերի տարեկան հայտարարագրի համաձայն Մերի Մոսինյանի աշխատանքի վարձատրությունը ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի դատական դեպարտամենտից կազմել է 5 մլն 300 հազար դրամ: Ստացվում է, որ մեկ տարվա ընթացքում դատավորի աշխատանքի վարձատրությունը 2 անգամ աճել է:

Հավելենք, որ Մերի Մոսինյանը 2019-ից 2022 թվականները աշխատել է Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման եւ սպասարկման բաժնում, այսինքն՝ Ալեն Սիմոնյանի նախկին աշխատակիցն է:

Հիշեցնենք, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մի շարք պաշտոնատար անձինք, իրենց ղեկավար պաշտոնատար անձի հանձնարարությամբ, մրցույթի ընթացքում հանդիպումներ ու հեռախոսազրույցներ են ունեցել «Ս» ընկերության ներկայացուցիչների հետ, նրանց հետ քննարկել մրցույթի պայմանները, ընդհուպ՝ նրանց տրամադրել մրցակից «Հ» հիմնադրամի կողմից հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը եւ նրանց օժանդակությամբ՝ մրցույթի ընթացքում սահմանել այնպիսի նոր կամ փոփոխված պայմաններ, որոնց հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը կարող են դիտվել չհամապատասխանող՝ հնարավորություն տալով ընկերությանը հեռացնել մրցույթից:

Սույն քրեական գործով մեղադրյալ էր ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը, որը խոստովանեց, որ հանցանք է գործել, ու գործուն զղջալու հիմքով՝ նրա եւ եւս մի քանի անձի մասով գործը կարճվեց, իսկ ահա, հայտնի հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրայրը՝ «Սիներջի» ընկերության ղեկավար Աշոտ Հովհաննիսյանը, ինչպես նաեւ նախկին նախարար Վահան Քերոբյանը, դեռ կռիվ կտան դատարանում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍԱՆՐԱՄԱՍՆԵՐ

«ԱԴՐԲԵՋԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԸ ՃԻՇՏ ՕԳՏԱԳՈՐԾԵՑ»

«Բայդենի հեռացումով աշխարհում շատ բան է փոխվելու՝ շատ պետությունների, ժողովուրդների եւ հակամարտությունների ընթացքներ, նույնիսկ, եթե հաղթի դեմոկրատ Ք. Հարիսը: Թրամփի հաղթանակի դեպքում փոփոխությունները լինելու են ավելի արագընթաց»: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է «Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ, քաղաքական վերլուծաբան Վահե Հովհաննիսյանը:

«Ուկրաինան սա արագ հասկացավ, եւ Կիեւի հռետորաբանությունն օրերի ընթացքում անճանաչելիորեն փոխվեց: Կիեւը հիմա ավելի է հակված բանակցությունների ու պատերազմի արագ դադարեցմանը: Սա ճկուն քաղաքականություն է, ինչը միանշանակ ճիշտ է: Այլ հարց է, որ դա պետք էր հասկանալ շատ ավելի վաղ՝ նախքան անմեղսունակ քաղաքականության հետեւանքով երկիրն ավերելը:

Նույն խնդրի առաջ կանգնած ենք մենք՝ Հայաստանն ու Ադրբեջանը: Մինչ ոմն հեծանվորդ փչացրեց Երեւանի հարաբերությունները Մոսկվայի հետ եւ տեղավորվեց Արեւմուտքի նժարում, Ադրբեջանն ընդունեց արեւմտյան միջնորդությունը, բայց այդ ընթացքում էապես բարելավեց իր հարաբերությունները Ռուսաստանի եւ Չինաստանի հետ, մեղմեց լարվածությունն Իրանի հետ:

Մինչ հայ հանրությունն աշխարհի ու քաղաքականության մասին իր գավառական պատկերացումներն էր խորացնում՝ իշխանությունների եւ Հ1-երի օգնությամբ գոռալով՝ «սաղ ռուսներն են մեղավոր», հակառակորդն իր շահերի բալանսավորումը հասցրեց կատարել առավելագույն արդյունավետությամբ:

ԱՄՆ փոփոխվող վարչակարգի եւ միջնորդների անհատական կազմի փոփոխման պայմաններում, Հայաստանը պետք է լինի ճկուն, եթե կուզեք՝ առանց ամոթի զգացման ճկուն: Հնարավո՞ր է դա անել այսօր գործող բանակցողի եւ գործող կառավարության պայմաններում: Գուցե ինչոր մասով հնարավոր է, սակայն դժվար պատկերացնելի, եթե հաշվի առնենք այսօրվա իշխանությունների անկանխատեսելիությունն ու հնարավոր կուլիսային պայմանավորվածությունները:

Ճիշտ պահին նոր բանակցողի եւ նոր կառավարության ի հայտ գալը կարող էր ուղղակիորեն հնարավորությունների նոր էջ բացել Հայաստանի եւ անգամ Արցախի համար: Շատ պետություններ են իրենց պատմության մեջ արել նման քայլեր եւ շահել պատմական կտրվածքում (ներառյալ՝մեր բոլոր 4 հարեւանները):

Կա կարծիք, որ ճիշտ կլիներ, որ դա արվեր պալատական պրոցեսների արդյունքում: Գուցե ճիշտ է, բայց պալատական պրոցեսների համար նախ եւ առաջ պալատ է պետք ունենալ: Մեզ մոտ այն վերածվել է պատահականությունների գավառական կայարանի:

Նոր եւ ճկուն պաշտոնական Երեւանի պատմական անհրաժեշտությունը սուր խնդիր է, որը պետք է դառնա առաջիկա պրոցեսների առանցքը», - գրել է նա:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՆՑԱՎՈՐ ԽՈՒՄԲ

«ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ֆինչական երկրորդ բաժնում, Ոստիկանության ծառայողների հետ սերտ համագործակցությամբ, բացահայտվել է իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով սինթետիկ եւ այլ բնույթի թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող հանցավոր խումբ:

2024 թվականի հուլիսի 17-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողները, օպերատիվ տվյալների իրացման արդյունքում, Երեւան քաղաքի Ալեք Մանուկյան փողոցից ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու եւ իրացնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, ոստիկանության կենտրոնական բաժին են տեղափոխել Երեւան քաղաքի 33-ամյա բնակիչ Վ.Կ-ին՝ իր կողմից վարվող «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենայով հանդերձ:

Վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 4.73 գրամ ընդհանուր քաշով թվով 7 փաթեթ եւ ծալովի դանակ. տեղամարդու բանավոր հայտարարության համաձայն՝ հայտնաբերված փաթեթներում առկա զանգվածը «Կրիստալ» տեսակի թմրամիջոց է:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երկրորդ բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 396-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 334-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Կասկածանքով ձերբակալվել է Վ.Կ.-ն:

Նշանակվել է դատաքիմիական փորձաքննություն. ըստ փորձագետի եզրակացության՝ փորձաքննության ներկայացված զանգվածը «Մեթամֆետամին» տեսակի թմրանյութ է:

Նախաքննության ընթացքում, օրենքով սահմանված կարգով, կասկածյալի բնակության վայրում կատարվել է խուզարկություն, որի ընթացքում հայտնաբերվել են առանձնապես խոշոր չափերի մոտ 25գ. «Մեթամֆետամին» եւ մոտ 600 գ. «Մահիրուխանա» տեսակի թմրամիջոցներ, էլեկտրական կշեռքներ, ինչպես նաեւ՝ թմրանյութերի իրացման համար նախատեսված տարբեր տեսակի պարագաներ:

Նախաքննության ընթացքում օպերատիվ տվյալներ են ստացվել խուզարկությամբ Վ.Կ.-ի մոտ հայտնաբերված թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրի վերաբերյալ:

Նախաքննության համաձայն՝ Վ.Կ.-ին թմրամիջոց իրացրել է Երեւան քաղաքի 36-ամյա բնակիչ Հ.Դ.-ն, ով, նախնական տվյալներով, 33-ամյա հարեւանի՝ Ս.Կ.-ի հետ ստեղծելով հանցավոր խումբ, ձեռք են բերել առանձնապես խոշոր չափերի հասնող, տարբեր տեսակի թմրամիջոցներ, դրանք պահել են իրենց բնակության վայրերում եւ այնտեղից էլ դրանք իրացրել:

Ըստ օպերատիվ տեղեկությունների՝ այլ անձանցից բացի, Վ.Կ.-ն եւս պարբերաբար, օրվա տարբեր ժամերի այցելել է վերջիններիս՝ տարբեր տեսակի թմրամիջոցներ ձեռք բերելու նպատակով՝ իր հերթին զբաղվելով թմրամիջոցների իրացմամբ:

Կատարվել են խուզարկություններ: Արդյունքում՝ Հ.Դ.-ի բնակության վայրում հայտնաբերվել են 14 հատ 100 ԱՄՆ դոլարանոց առերեւույթ կեղծ թղթադրամներ, Ս.Կ.-ի բնակության վայրում՝ առանձնապես խոշոր չափերի մոտ 300 գրամ «Մարիխուանա» եւ մոտ 20 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցներ, էլեկտրական կշեռքներ, 122 հատ առերեւույթ կեղծ 100 ԱՄՆ դոլարանոց թղթադրամներ, ինչպես նաեւ՝ թմրանյութերի պատրաստման, օգտագործման եւ իրացման համար նախատեսված տարբեր պարագաներ:

2024 թվականի հուլիսի 18-ին Երեւան քաղաքի Արշակունյաց եւ Ագաթանգեղոս փողոցների խաչմերուկից Ս.Կ.-ն, ապօրինի թմրանյութ պահելու եւ իրացնելու կասկածանքով, ձերբակալել եւ տեղափոխել է ոստիկանության կենտրոնական բաժին: Վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է դեղնականաչավուն գույնի, յուրահատուկ հոտով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի նմանվող 92.7 գրամ քաշով զանգված:

Հայտնաբերված թմրանյութերի վերաբերյալ նշանակվել է դատանյութագիտական փորձաքննություն:

Փաստի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երկրորդ բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Որոշում է կայացվել՝ նախաձեռնված քրեական վարույթները միացնելու եւ նախաքննությունը մեկ վարույթում շարունակելու մասին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Վ.Կ.-ին եւ Հ.Դ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, իսկ Ս.Կ.-ին՝ 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ նշված 3 անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին, որոնք բավարարվել են:

Նախաքննությունը շարունակվում է»,- ասվում է ՔԿ հաղորդագրությունում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

ՈՐԴՈՒՆ ԵՎ ԴՍՏԵՐԸ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿԱՆՉԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը ծանուցում է ուղարկել Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանին, նրա որդուն՝ Սպարտակ Ղուկասյանին, դստերը՝ Մանյա Ղուկասյանին եւ հայտնել.

«Ղեկավարվելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 16-րդ եւ 17-րդ հոդվածներով՝ ծանուցում եմ, որ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Ձեզ պատկանող գույքի առնչությամբ իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր:

Դուք իրավունք ունեք սույն ծանուցագիրը ստանալու պահից՝ մեկ ամսվա ընթացքում, ներկայանալ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն՝ ծանոթանալու գործի նյութերին, ներկայացնելու դիրքորոշում, ինչպես նաեւ հայտարարագիր»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԻՐԱՐԱՆՑՈՒՄ՝ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ

Երեկ Ագարակ քաղաքում իրարանցում է եղել: Իրավապահները գտել են Երեւանում երիտասարդ տղային կյանքից զրկածին:

Հուլիսի 23-ին՝ ժամը 07:00-ին, Ագարակ քաղաքի Նժդեհ փողոցում իրարանցում է եղել, իրավապահները մտել են վերոնշյալ փողոց, որտեղ բնակիչները նկատել են, որ քաղաքացու են ձերբակալել: Պարզվել է, որ ձերբակալվածը Նոր Հաճնի 43-ամյա բնակիչ է, որը մայիսի 13-ից Նոր Նորքի բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի՝ սպանության մեղադրանքով:

Իսկ ո՞ր սպանության գործով էր նա հետախուզվում:

Մայիսի 1-ին սպանություն է տեղի ունեցել Երեւանում: Ավան վարչական շրջանի Աճառյան փողոցում գործող «Ավանգարդ» հյուրանոցային համալիրի հարեւանությամբ սպանել էին Կոտայքի մարզի բնակիչ 35-ամյա Գեւորգ Ն.-ին:

Ըստ բժիշկների՝ նա հիվանդանոց է տեղափոխվել «կրծքավանդակի հատվածում դանակահարված» անգիտակից վիճակում, որտեղ էլ արձանագրվել է սրտի կանգ:

Ենթադրյալ հանցագործին իրավապահները փնտրում էին եւ ահա դեպքից 2 ամիս անց Ագարակ քաղաքի Նժդեհ փողոցում հայտնաբերել են 43-ամյա տղաարդուն, որը կասկածվում է «Ավանգարդ» հյուրանոցային համալիրի հարեւանությամբ 35-ամյա երիտասարդին սպանելու մեջ:

ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏ է ՎԵՐԱԴԱՐՁՐԵԼ ՀԱՅՑԸ

ՀՀ վարչական դատարանը հետ է վերադարձրել ԱԱԾ-ում կալանքի տակ գտնվող ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի, կնոջ եւ որդիների հայցն ընդդեմ ՊՆ-ի:

Մեզ հայտնի դարձավ, որ դատավոր Հերմինե Մուրադյանը հայցի մեջ սխալներ է գտել ու այն հետ վերադարձրել՝ սխալներն ուղղելու համար:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ի տեղեկություններով՝ շուրջ 2 տարի ԱԱԾ մեկուսարանում կալանքի տակ գտնվող պաշտպանության բանակի նախկին հրամանատար Միքայել Արզումանյանը, կինը՝ Դիանա Դավթյանը, որդիները՝ Արսեն եւ Ալբերտ Արզումանյանները դատի են տվել պաշտպանության նախարարությանը:

Մասնավորապես, ArmLur.am-ին հայտնի է դարձել, որ վերջիններս պահանջում են՝ դատարանը ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության պետի 2023 թ. հուլիսի 12-ի «Ծանուցում» վերտառությամբ թիվ 8 վարչական ակտը վերացնի:

Հիշեցնենք, որ 2022 թվականին կալանավորվեց 44-օրյա պատերազմի օրերին Արցախի պաշտպանության բանակը ղեկավարած Միքայել Արզումանյանը, որին մեղադրանք է առաջադրվել Շուշիի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում զինվորական պաշտոնեական անփութության համար:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 23-ից հուլիսի 24-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 131 դեպք որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼ ԵՆ

Օրերս համալրվեց բարձրագույն կրթության դիպլոմ չունենալու պատճառով աշխատանքից ազատված Տավուշի մարզի բնակավայրերի վարչական ղեկավարների թիվը: Տավուշի մարզի՝ 1000-ից ավել բնակիչ ունեցող 6 բնակավայրի վարչական ղեկավար օրենքի պահանջով ազատվել է պաշտոնից: 6-ից 5-ը Ադրբեջանին սահմանակից գյուղերի վարչական ղեկավարներ էին: Նիկոլ Փաշինյանը առանց բուհական դիպլոմի ավելի քան 6 տարի ՀՀ-ի վարչապետն է, նախկինում բենզինի լիցքավորող աշխատած, Դիլիջանի քոլեջի շրջանավարտ, այժմ Եվրոպական համալսարանում հեռակա սովորող, իր անձնական գործում սեռը «արու» գրած, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը ավելի քան 5 տարի ղեկավարում է Դիլիջան քաղաքից եւ հարակից 6 գյուղերից բաղկացած Դիլիջան խոշոր համայնքը, իսկ Տավուշի սահմանամերձ գյուղերի վարչական ղեկավարներին պաշտոնից ազատել են:

ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՓՈՂ ՄԻՇՏ ՈՒՆԵՆ

Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ մարզի հանրակրթական 76 դպրոցների շենքերից 10-ն ունի հիմնանորոգման, 32-ը վերանորոգման (դասասենյակներ, միջանցքներ, մարզադահլիճներ) կարիք: Պետական դպրոցների շենքերը նորոգելու համար պետական բյուջեից գումարներ չեն հատկացվում, սակայն Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն իրեն եւ մարզպետարանի պաշտոնյաներին, հայտնի չէ թե որ նվաճումների համար Հայաստանի սուղ, վարկերով ճեւավորվող պետական բյուջեից առատորեն պարգեւատրում է: Տավուշի մարզպետն ու մարզպետարանի պաշտոնյաները 2023թ.-ին պետական բյուջեից ստացել են 71 միլիոն 960 հազար դրամ պարգեւավճար, այս տարի, հունիսի 15-ի դրությամբ ստացել են 32 միլիոն 75 հազար 200 դրամ, հուլիսի 15-ի դրությամբ՝ 33 միլիոն 484 հազար 235 դրամ պարգեւավճար:

ՎԱՆՔԸ ԿՈՎԵՐ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐ ԵՆ ԴԱՐՁՐԵԼ

Ֆեյսբուքի «Դիլիջանցիք» խմբում «Գրիգ Լուս» օգտատերը տեսանյութ է զետեղել Դիլիջան քաղաքից 3,2 կմ հյուսիս-արեւմուտք գտնվող, 11-12 դարերի Ջուխտակ վանքի մոտ տիրող գարշահատության, եկեղեցու բակում կովերի գոմաղբի մեծ կույտերի մասին: Օգտատերը նշել է, որ ամեն օր հարյուրավոր զբոսաշրջիկներ են այցելում հնամենի վանք. սրբավայրը կով պահելու տեղ չէ, եւ սա Հայաստանի, Դիլիջանի իմիջի խնդիր է: Նա նշել է նաեւ դեպի Ջուխտակ վանք ճանապարհի վատ վիճակի, Ջուխտակ վանքի մոտ գտնվող՝ Մաթոսավանք տանող ճանապարհին նորմալ ուղեցույցի եւ հեռախոսակապի բացակայության մասին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՁՈՒՐ ՉՈՒՆԵՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐԸ» ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԹՈՂԵԼ

Հերթական անգամ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն անորոշության եւ զարմանքի մեջ է թողնում իր բաժանորդներին՝ ոչնահարելով վերջիններիս իրավունքները:

Ավելի վաղ գրել էինք, որ ահազանգեր ենք ստանում այն մասին, որ ջրամատակարարումը հաճախակիորեն դադարեցվում է, սակայն սա դեռ ամենը չէ:

Նաեւ գրել էինք, որ ծորակից հոսող ջուրը, մեղմ ասած, օգտագործելու ենթակա չէ: Օրինակ՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում որոշ քաղաքացիներ ծորակը բացելիս տեսել են, որ ջուրը թանաքագույն է եւ/կամ բաց կապույտ երանգով:

Որոշ հասցեներում էլ ջուրը ժանգոտ է հոսում, հատկապես՝ ջրամատակարարման վերականգնումից ժամեր անց:

«Ժողովուրդ» օրաթերթը այս հարցով դիմել էր «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին՝ պարզելու՝ որն է այս ամենի խնդիրը, ինչու է խմելու ջուրը օգտագործման ոչ ենթակա, որտեղից էլ մեզ հորդորել էին գրավոր հարցմամբ դիմել:

«Վեոլիա ջուր» ՓԲԸ-ից ստացել ենք մեր գրավոր հարցման պատասխանը, որում մասնավորապես ասվում է. «Ջրամատակարարումն իրականացվում է՝ համաձայն 2024 թվականին հաստատված ժամանակացույցի, որին սպառողները կարող են ծանոթանալ «Վեոլիա ջուր» ՓԲԸ պաշտոնական կայքէջում:

Տեղեկացնում ենք, որ ջրամատակարարման ընդհատումները կապված են լինում պլանային եւ վթարավերականգնողական աշխատանքների իրականացման հետ, ինչի մասին բաժանորդները պատշաճ կերպով ծանուցվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ 30.11.2016թ. թիվ 378-Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների գլուխ 13-ի դրույթներին համապատասխան: Ջրանջատումներից խուսափել հնարավոր չէ, քանի որ անգամ ամենաարդիական տեխնիկական վիճակում գտնվող ջրամատակարարման համակարգերն ապահովագրված չեն վթարներից, իսկ պլանային ջրանջատումները կատարվում են հետագա վթարային իրավիճակները կանխարգելելու նպատակով:

Տեղեկացնում ենք նաեւ, որ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից մատակարարվող խմելու ջուրը գտնվում է ամենօրյա լաբորատոր հսկողության տակ՝ համաձայն ՀՀ սանիտարական նորմերի կանոնների եւ պահանջների»:

Ահա այսպես, «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն հերթական անգամ բավարար պատասխան չտվեց մեր հղած հարցերին. թե ինչո՞ւ է խմելու ջրի փոխարեն հոսում թանաքագույն կամ ժանգոտ գույն՝ պատասխանը մեզ ոչ ոք չտվեց:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունն ահազանգ էր ստացել այն մասին, որ Նորաշեն 24 հասցեում ջրամատակարարումը 24 ժամի փոխարեն 17 ժամ է դարձել, ինչի մասին անգամ բնակիչներին տեղյակ չեն պահել:

Բնակիչները «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմեցին, որ գիշերը՝ ժամը 22:00-ից, ջուր են հավաքում, որպեսզի կարողանան օգտագործել, մինչեւ կբարեհաճեն նորից ջրերը միացնել: Մի խոսքով՝ ամառվա այս տապին քաղաքացիները ողջ օրը մտածում են, թե ինչպես լուծեն ջրի խնդիրը:

Ի պատասխան մեր հարցման՝ ընկերությունից նշել էին. «Համաձայն 2024թ. հրապարակված ժամանակացույցի՝ Երեւան քաղաքի մի շարք հասցեների, այդ թվում՝ Նորաշեն 24 շենքի ջրամատակարարումը մայիսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը պետք է իրականացվի 17 ժամյա ռեժիմով՝ 07:00-24:00 ժամերին: Նշված ժամանակացույցը կազմվել է հաշվի առնելով ընկերության ներկայիս տեխնիկական հնարավորությունները եւ համապատասխանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ 30.11.2016թ. թիվ 378-Ն որոշմամբ հաստատված խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման/ կեղտերի մաքրման/ ծառայությունների, մատուցման կանոններով խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող նվազագույն պահանջներին: Սպասարկվողները ջրամատակարարման ժամանակացույցին կարող են ծանոթանալ «Վելոիա ջուր» ՓԲԸ-ի կայքէջում:

Հարկ եմ համարում նշել, որ ընկերությունը, ո՛չ վերոհիշյալ կանոնների եւ ո՛չ էլ խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման/կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն, շուրջօրյա ջրամատակարարմամբ ապահովելու պարտավորություն չունի»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՆՀԵՏԱՑԵԼ Է ԲԵՌՆԵՐ ԿՇՌՈՂ ԿՇԵՌՔԸ

Չարենցավան խոշորացված համայնքի Բջնի գյուղի կշեռքն անհետացել է:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում օրերս ասաց Չարենցավան խոշորացված համայնքի՝ «Ապրելու երկիր» կուսակցության ավագանու անդամ Դավիթ Պապոյանը:

Վերոնշյալ կշեռքը չափերով բավականին մեծ է՝ մինչեւ մի քանի տոննա հասնող քաշով:

Կշեռքի վրա կանգնում էին բեռնատար մեքենաներ, եւ դա գյուղի բեռներ կշռող միակ կշեռքն է եղել:

Ավագանու անդամը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ներկայացրել է, թե այդ կշեռքն ինչ նշանակություն է ունեցել գյուղի բնակիչների համար:

Գյուղի բնակիչներից էլ Գրիշա պապիկը, այս թեմայի մասին խոսելիս, ասաց, որ հիմա, երբ կշեռքը չկա, ցորենն ու գարին պարկերով են կշռում, ինչն ավելի է բարդ դարձնում աշխատանքը:

ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԸ ԱՂԲԻՒ ՄԵՋ ԿՈՐԱԾ Է

Կապուտակ Սեւանա լճից սկիզբ առնող Հրազդան գետը, որն անցնում է նաեւ Կոտայքի մարզով, ոչ այդքան մխիթարելի իրավիճակում է գտնվում:

«Ժողովուրդ» օրաթերթը այցելել է Չարենցավան խոշորացված համայնքի Բջնի գյուղ, որտեղից պարզ երեւում է, թե ինչ իրավիճակում է գտնվում գետը:

Չնայած այն փաստին, որ Բջնին համարվում է լավագույն տուրիստական վայրերից մեկը, այն քայլ առ քայլ ավելի է աղտոտվում ու քարուքանդ լինում:

Տեղի բնակիչների փոխանցմամբ՝ շաբաթ եւ կիրակի օրերին Բջնիում մեծ տուրիստական հոսքեր են լինում, սակայն բոլոր այն թափոնները, պլաստիկե շշերը, որոնք լողում են գետով՝ զարմանք են առաջացնում այցելուների մոտ:

Չարենցավան խոշորացված համայնքի «Ապրելու երկիր» կուսակցության ավագանու անդամ Դավիթ Պապոյանը անդրադարձավ նաեւ այս թեմային:

Գեղատեսիլ վայրերով լի Հայաստանը օրեցօր ավելի է աղտոտվում եւ ոչինչ չի արվում, չնայած այն բանին, որ ճոխ եւ պաթետիկ խոսքերով հայրենիքի մասին խոսվում է: Գետում լող տվող թռչունները այլեւս իրենց միայնակ չեն զգում, քանի որ գետը նետված պլաստիկե շշերն ու այլ թափոնները առայժմ չեն լքել թռչուններին:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 3 մարդ զոհվել է, 13-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Իդրամով» կյանքը հեշտ է: Եկել ենք պատմելու, թե ինչ նոր հնարավորություն ենք բերել Ձեր կյանքն էլ ավելի հեշտացնելու համար:

Տոմսերի վաճառքի խոշորագույն հարթակ Tomsarkgh.am-ի հետ ռազմավարական գործակցության շնորհիվ Idram&IDBank առցանց հարթակում բարելավել ենք «Տոմսեր» բաժինը՝ ավելի շատ մշակութային միջոցառումներ ավելացնելով հարթակում, եւ, որ ամենակարեւորն է, ստեղծել ենք հնարավորություն ընտրելու ոչ միայն միջոցառումն ու տոմսի/փաթեթի տեսակը, այլեւ նշելու դահլիճում ցանկալի շարքն ու տեղը:

Սա նշանակում է, որ այսուհետ կարող եք ընդամենը մի քանի հպումով ձեռք բերել տոմսեր՝օգտագործելով ընդամենը մեկ հավելված, ճիշտ այնպես, ինչպես սիրում ենք:

Այսպես, «Տոմսեր» բաժնում նաեւ առանձնացված կլինեն մշակութային եւ ժամանցային միջոցառումները՝ ըստ ուղղությունների:

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ՝ ESG ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ

Բրիտանական աշխարհահռչակ Euromoney ֆինանսական պարբերականը ESG չափանիշների շրջանակում Ակբա բանկին ճանաչել է Հայաստանի «Լավագույն ESG-Բանկ»:

Հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, «Ակբան» մշակել եւ շուտով ներդնելու է «կանաչ» վարկերի տրամադրման սեփական ընթացակարգերը, որոնց միջոցով սահմանվելու են «կանաչ» վարկերի չափանիշները, CO2-ի արտանետման հաշվարկման մեխանիզմները:

«Ակբա» բանկն արդեն մշակել է նաեւ «կանաչ» պարտատոմսերի համակարգ (Green Bond Framework), ինչը թույլ է տալու ներգրավվող միջոցներն ուղղել միայն «կանաչ» նախագծերի ֆինանսավորմանը:

Բացի այս, «Ակբան» կթողարկի նաեւ Կայուն զարգացման հաշվետվություն (Sustainability report)՝ ներկայացնելով բանկի գործունեության ազդեցությունը սոցիալական, տնտեսական եւ բնապահպանական ոլորտներում:

«Ակբան» բանկային համակարգում «կանաչ» տնտեսությունների, էներգաարդյունավետ նախագծերի ֆինանսավորման առաջատարներից է: Դեռեւս 2011-ին «Ակբան» IFC-ի (Միջազգային ֆինանսական կորպորացիա) հետ համատեղ մշակել եւ բանկի կառավարման համակարգում ներդրել է «Սոցիալական եւ շրջակա միջավայրի ռիսկերի կառավարման» համակարգ, որի սահմաններում շարունակում է ֆինանսավորման արդյունավետ գործունեություն ծավալել հատկապես ESG չափանիշների շրջանակում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Ստելլա Մաթեւոսյանս (AS0404379), ծնված 1986 թ.-ին, կորցրել եմ ատեստատս (2003թ., կոդ՝ ԱԱ157087): Գտնողներին խնդրում եմ զանգահարել 077 763 037 հեռախոսահամարին:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» Գ

ԲԱՆԿԸ SS Summit 2024-Ի Strong Partner-Ն Է

«Արդշինբանկը» նորից Seaside Startup Summit ճամբարային բիզնես ֆորումի կողմին է՝ որպես Strong Partner: Այս տարի այն անց է կացվում հուլիսի 21-ից 27-ը: Ֆորումի նպատակը ձեռներեցներին, ներդրողներին եւ սկսնակ գործարարներին մեկ վայրում միավորելն է՝ մեր տարածաշրջանի համար ստեղծելով արդյունավետ բիզնես միջավայր, աջակցելով տեղական սարտափների զարգացմանը եւ առաջադիմելով կայուն համագործակցություն էկոհամակարգի մասնակիցների միջեւ: Ֆորումը նախատեսում է մրցանակային ֆոնդ, կրթական ծրագրեր, պանելային քննարկումներ եւ այլն: Համաձայն ձեւավորված ավանդույթի՝ ֆորումին կմասնակցեն անկախ ներդրողներ եւ վենչուրային հիմնադրամների ներկայացուցիչներ ամբողջ աշխարհից:

«Առաջին անգամ «Արդշինբանկը» մասնակցել է Seaside Startup Summit-ին 2023-ին, եւ եթե մենք նորից այստեղ ենք, նշանակում է, մեզ համար այն շարունակում է հետաքրքիր մնալ, եւ մենք ավելի մեծ հեռանկարներ ենք տեսնում: Ներսից հետեւել ամենաինովացիոն ոչ ֆորմալ սթարթափ-միջոցառման ընթացքին, լինել իրադարձությունների հորձանուտում, սա կայուն հարաբերությունների եւ հաջողված համագործակցության հիմքն է: Արդշինբանկը մասնակցում է ֆորումին տարբեր ոլորտների մասնագետներից կազմված թիմով», - նշեց «Արդշինբանկի» Թվայնացման եւ տաղանդների կառավարման գծով տնօրեն Հարություն Իսպիրյանը:

Seaside Startup Summit 2024 ճամբարային բիզնես ֆորումի ընթացքում «Արդշինբանկի» տաղավարը բանկի թվային մասնաճյուղ է. տեղում իրականացվում է խորհրդատվություն, ֆորումի մասնակիցներին հնարավորություն է ընձեռնվում նաեւ օգտվել հատուկ առաջարկից՝ ձեռք բերել «Արդշինբանկի» պրեմիում դասի քարտեր՝ 6 ամիս անվճար սպասարկման պայմանով: Իսկ քարտերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ տեղում՝ մեր մասնագետների միջոցով:

Միջոցառման օրակարգին կարող եք ծանոթանալ այստեղ:

«Արդշինբանկի» մասին

«Արդշինբանկը» Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: «Արդշինբանկն» ունի շուրջ 400.000 հաճախորդ, որոնց սպասարկում են բանկի 1.700-ից ավելի աշխատակիցներ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 65 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ եւ օնլայն բանկինգի համակարգերով: Բանկն ունի երկրում ամենալայն մասնաճյուղային ցանցը, ինչպես նաեւ ներկայացուցչություն Փարիզում: «Արդշինբանկը» Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- ք. Երեւան, Նոր-Նորք, Վ. Թոթովենցի փողոց, 6/1 շենք, 45 հասցեում գտնվող 62,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27870000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., Նոր թաղամաս, 20 շենք, 43 հասցեում գտնվող 65,1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20570000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Ստեփանյան փողոց, 5/1 հասցեում գտնվող 392,18 ք.մ. բնակելի տուն եւ 0,0466 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 63340000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Մ. Խորենացու փողոց, 28 շենք, 2 հասցեում գտնվող 79,53 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18760000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Նոյեմբերյան, քաղաք Նոյեմբերյան, 26 Կոմիսարների փողոց, 3/1 հասցեում գտնվող 353.86 ք.մ. բնակելի տուն, 80.7 քմ ավտոտնակ, 49.5 ք.մ. անասնաշենք, 8.91 քմ սանհանգույց եւ 0.246 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 31300000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան ք., Պրոմեթեւսի փողոց, 27 շենք, թիվ 2 հասցեում գտնվող 67.5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9250000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Դավթաշեն, 10-րդ փողոց, 6 հասցեում գտնվող 355,8 ք.մ. բնակելի տուն, 6,75 քմ կաթսայատուն, 10,54 քմ ավտոտնակ, 8,34 քմ սանհանգույց, 147,55 քմ ավտոտնակ, 53,24 քմ /122,45 խմ/ պարիսպ եւ 0,663 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 42200000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Ձորք թաղամաս, 12 շենք, 17 հասցեում գտնվող 86,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19180000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Գ. Միքայելյան փողոց, 72 շենք, 45 հասցեում գտնվող 83,7 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27500000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի ք., Սայաթ-Նովայի փողոց, 6 հասցեում գտնվող 107,2 քմ բնակելի տուն եւ 0,121 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 8400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Սասունցի Դավթի փողոց, 70/1 շենք, 6 հասցեում գտնվող 59,65 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 32100000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան, Սեւան ք., Ս. Սեւանեցու փողոց, 9/41 հասցեում գտնվող 30,91 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 6100000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 5-րդ թաղամաս, 10 շենք, 23 հասցեում գտնվող 91,3 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 23200000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, Աբովյան ք., 8-րդ միկրոշրջան, 1-ին թաղամաս, 42 հասցեում գտնվող 209,56 քմ բնակելի տուն եւ 0,0521 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 58500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Հ. Շիրազի փողոց, 30 շենք, 24 հասցեում գտնվող 67,6 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 25940000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ թաղամասի 1-ին փողոց, 1/710 հասցեում գտնվող 90,22 քմ բնակելի տուն, 5,16 քմ /12,9 խմ/ պարիսպ եւ 0,023357 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 44000000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Սայաթ-Նովայի փողոց, 14-1 հասցեում գտնվող 476,6 քմ բնակելի տուն եւ 0,03705 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 85700000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Ն. Մառի փողոց, 14 շենք, 31 հասցեում գտնվող 77,96 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 38200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Ա.Չեխովի փողոց, 23 շենք, 46 հասցեում գտնվող 67,78 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 33430000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 12.08.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 09.09.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

Freedom Academy

ՄԵԿՆԱՐԿԸ ԿՏՐՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հուլիսի 25-ին՝ ժամը 13:00-ին, Հայաստանի պատմության թանգարանի դրամի սրահում կտրվի Freedom Broker Armenia-ի կրթական նախաձեռնությունը՝ Freedom Academy-ն: Այս հարթակն ուղղված է Հայաստանի բնակչության ընդհանուր ֆինանսական գրագիտության բարձրացմանը: Հարթակի նպատակն է հանրահռչակել ոլորտին առնչվող գիտելիքները եւ չեզոքացնել ներդրումների մասին առասպելները:

Թանգարանում այդ օրը կանցկացվի «Ֆինանսական գրագիտության բարձրացումը՝ որպես կապիտալի շուկայի զարգացման գործոն» կլոր սեղան, որի շրջանակում հանդես կգան ոլորտի առաջատար բանախոսները՝ քննարկելով ֆինանսների ոլորտում կրթություն ստանալու կարեւորությունը երկրի ընդհանուր տնտեսական զարգացման համար: Բանախոսների թվում են Freedom Broker Armenia-ի տնօրեն Հովակ Հովակիմյանը, Financial Market Members Association-ի գործադիր տնօրեն Կարեն Զաքարյանը, Հայաստանի ներքին աուդիտորների ինստիտուտի առաջին նախագահ (2013-2021թթ), Խորհրդի անդամ Արա Չալաբյանը, Հայաստանի ֆոնդային բորսայի Կառավարման խորհրդի անդամ Անի Մակարյանը, ԵՊՀ Տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանը եւ այլք:

Նույն օրը նաեւ մտադրությունների վերաբերյալ հուշագիր կստորագրվի համալսարանների հետ: Միջոցառման վայրը պատահական չի ընտրված:

Թանգարանի մետաղադրամների հավաքածուն իր էությամբ եզակի է:

Միջոցառման շրջանակներում դահլիճում կկազմակերպվի դրամագիտական փոքրիկ ցուցահանդես, որը կդառնա եզակի ու առանձնահատուկ կապող կամուրջ՝ անցյալի եւ ներկայի միջեւ: Բացի այդ, Freedom Broker Armenia-ն աշխատանքներ կիրականացնի նաեւ թանգարանում պահվող դրամագիտական ցուցանմուշների պահպանման եւ թվայնացման ուղղությամբ:

Ֆինանսական ակադեմիան կծառայի որպես համապարփակ հարթակ, որը կօգնի շուկայի մասնակիցներին հասկանալ իրենց ֆինանսական հարստությունը կառավարելու հիմնական եւ առաջադեմ սկզբունքները: Ֆինանսների ոլորտում գիտելիքների եւ հմտությունների բավարար մակարդակը թույլ կտա Հայաստանի բնակչությանը ոչ միայն ճիշտ գնահատել շուկայի իրավիճակը, այլեւ ողջամիտ որոշումներ կայացնել ներդրումային ոլորտում: Սա հենց Freedom Academy-ի առաքելությունն է: Freedom Academy-ի հարթակը կառաջարկի կրթական նյութերի լայն տեսականի, ներառյալ առցանց ձեւաչափը՝ տեսադասընթացներ, ինտերակտիվ դասընթացներ, հոդվածներ, ինֆոգրաֆիկա եւ խորհուրդներ:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

Լ. ՋՈՒԼՖԱԼԱԿՅԱՆԸ՝ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՓԱՌՔԻ ՍՐԱՀՈՒՄ

Հունահռոմեական ըմբշամարտի օլիմպիական չեմպիոն Լեւոն Ջուլֆալակյանն ընդգրկվել է Ըմբշամարտի համաշխարհային ֆեդերացիայի փառքի սրահում: Այս մասին Ֆեյսբուքի իր էջում հայտնել է Արսեն Ջուլֆալակյանը:

«Ըմբշամարտում ունեցած բացառիկ նվաճումների եւ մեծ ավանդի շնորհիվ (եւ՛ որպես մարզիկ, եւ՛ որպես մարզիչ) Լեւոն Ջուլֆալակյանը ներառվեց Ըմբշամարտի Համաշխարհային Ֆեդերացիայի փառքի սրահում (United World Wrestling Hall of Fame): Ի դեպ, առաջինը Հայաստանի Հանրապետությունից: Պարգեւատրման պաշտոնական արարողությունը տեղի կունենա օգոստոսի 5-ին Փարիզում՝ Ըմբշամարտի տանը»,- գրել է նա:

Է. ԱՎԱՆԵՍՅԱՆԸ՝ ՔԱՌՈՐԴ ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ

Աշխարհի 76-րդ ռակետ, հայ թենիսիստուհի Էլինա Ավանեսյանը դուրս է եկել Ռումինիայի Յասի քաղաքում ընթացող WTA-250 շարքի մրցաշարի երրորդ շրջան:

Երկրորդ տուրում Էլինան 6:2, 5:7, 6:4 հաշվով հաղթեց աշխարհի 97-րդ ռակետ, խորվաթ Պետրա Մարտիչին, հանդիպումը տեւեց է 2 ժամ 33 րոպե:

Ռումինիայում ընթացող մրցաշարի քառորդ եզրափակչում Ավանեսյանը կխաղա Ելենա Գաբրիելա Ռուսե - Ժակլին Քրիստիան զույգի հաղթողի հետ:

ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂ

ՖԻԴԵ-ի վարպետ Վահե Սուքիասյանը դարձել է «17th Poti International Chess Festival Nana Aleksandria Cup - 2024» միջազգային մրցաշարի շրջանակներում անցկացված երկրորդ կայծակնային շախմատի մրցաշարի հաղթող:

Ինչպես տեղեկացնում են Շախմատի ֆեդերացիայից, հնարավոր 9 միավորից Վահեն վաստակել է 8.5 միավոր:

Հակոբ Հակոբյանը 7.5 միավորով զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը:

ՖԻԴԵ-ի վարպետ Էդգար Հայրապետյանը 7 միավորով զբաղեցրել է 3-րդ հորիզոնականը:

Մինչեւ 1700 վարկանիշ ունեցողների պայքարում 5 միավորով 1-ին հորիզոնականը զբաղեցրել է Գագիկ Մելքումյանը:

ՄՆՈՒՓ ԴՈԳԸ՝ ՕԽ ՋԱՀԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՎԱՋՔԻՆ

Ամերիկացի ռեփեր Մնուփ Դոգը կլինի Փարիզի Օլիմպիական խաղերի փոխանցումավազքի վերջին մասնակիցներից մեկը՝ մինչեւ խաղերի բացման արարողությունը: Մնուփ Դոգը ջահով կանցնի Փարիզի հնագույն թաղամասերից մեկով՝ Սենթ-Դենիսով: Նույն թաղամասում փոխանցումավազքին կմասնակցեն նաեւ ֆրանսիացի դերասան Լետիցիա Կաստան, ռեփեր MC Սոլարը եւ այլք:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱԽԱՂԸ

Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի նոր ներկայացման առաջնախաղը տեղի է ունեցել անսովոր պայմաններում. «Մեկ գավաթ էնդորֆին» կատակերգությունը հանդիսատեսին է ներկայացվել ոչ թե թատրոնում, այլ Վանաձորի Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարանում: Նպատակը երկու կառույցի միջեւ մշակութային կապերի զարգացմանը նպաստելն է:

Պրեմիերային ներկա է եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը: Ներկայացումից առաջ կազմակերպվել է շրջայց պատկերասրահում, այնուհետեւ՝ գինու հյուրասիրություն, գինու համտեսի վարպետաց դաս է անցկացվել եւ ցուցադրվել են գեղանկարիչ Խաչիկ Ղարաբեկյանի ստեղծագործությունները (թանգարանի եւ անձնական հավաքածուներ):

Ներկայացման բեմադրության հեղինակը Ժիրայր Գաբրիելյանն է, երաժշտական ձեւավորումը՝ Հրանտ Վարդումյանինն է, պարերը՝ Արման Սաքանյանինն են: Դերերում՝ Արման Սաքանյան, Մարիամ Ղեւոնդյան, Էդգար Քոչարյան, Նոնա Սաֆարյան, Էդգար Բարսեղյան:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԽՈՒՄԲԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳՈՎ

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունը ուրախ է ներկայացնել «Սիհասին» բնիկ ամերիկյան ռոք խմբի «Շողա» երգի հայերեն ռեմիքս տարբերակը հայ երաժիշտ-կատարողներ Լիլի Ալեքսանյանի (վոկալ), Գոհար Քեշիշօղլյանի (քանոն) եւ Քրիստինե Հովսեփյանի (կոպալ-դհոլ) կատարմամբ:

«Լինելով Միացյալ Նահանգների բնիկ ժողովուրդների ներկայացուցիչ՝ մեզ համար ոգեշնչող էր երաժշտության, պարի, լեզվի եւ արվեստի միջոցով ձեւավորել կապեր ու կամուրջներ՝ ուղղված մշակույթի պահպանությանը: Հուսով ենք, որ այս ստեղծագործական համագործակցությունը «շողալու» եւս մեկ հնարավորություն կլինի հայկական հարուստ ոչ նյութական ժառանգության համար», - ասել է Քլեյսոն Բենալին:

Երաժիշտ Գոհար Քեշիշօղլանը նշել է. «Մեծ բավականություն ստացա «Սիհասին» խմբի հետ աշխատելուց: Ինձ համար առավել կարեւոր էր առնչվել մեր հյուրերի մշակույթին ու ներկայացնել մեր մշակույթը: Միասին ունեցանք աշխատանքային հրաշալի գործընթաց»:

«Շողա» երգի հայերեն ռեմիքս տարբերակը ԱՄՆ դեսպանության աջակցությամբ ձայնագրել է Նարեկ Բարսեղյանը («Բամբիռ»):

Full Moon Fest

Անձրեւի եւ չդադարող ծափերի ներքո օրերս Երեւանում կայացավ Full Moon Fest 2024-ը, որը հյուրընկալել էր Outlandish, Vintage, 5Sta Family, Banderos, Reincarnation խմբերին եւ D'Litte-ին: Լրագրողների հետ զրույցում երգչուհի D'Litte-ն ասաց, որ երրորդ անգամ է համագործակցում The moon production-ի հետ: Երգչուհին խոստովանեց՝ եկել է առողջական խնդիրներով, բայց անձրեւն իրեն չխանգարեց: «Բեմում 45 րոպե լինելով՝ գրեթե չորս տարի ավելի ես ապրում, քան սովորական մարդիկ: Որպես հեղինակ կատարող փառատոնն ինձ համար կարեւոր է այնքանով, որ ծանոթանում եմ նոր արտիստների հետ, իսկ հանդիսատեսի հետ կապն ու կոմունիկացիան անչափ կարեւոր է»,- նշեց D'Litte-ը:

The moon production-ի հիմնադիր Լուսինե Աչոյանն էլ ընդգծեց՝ նման մասշտաբներով միջոցառումների ժամանակ ֆորսմաժորային իրավիճակներն անխուսափելի են: «Չորրորդ անգամ է կայանում փառատոնը: Այս անգամ հրավիրել ենք վեց երաժշտական խումբ՝ ընտրելով ամենասիրված արտիստներին: Չնայած անձրեւին՝ հանդիսատեսը վայելել է համերգը եւ դրական էներգիա ստացել: Մեր նպատակն է ամեն տարի ավելի զարգանալ եւ հնարավորության դեպքում միջազգային ավելի հայտնի արտիստների հրավիրել Երեւան»,- շեշտեց Լուսինե Աչոյանը:

● *Հուլիսի 29-ին՝ ժամը 20:30-ին, թատրոն տանիքում կցուցադրվի «Մեծն Գեթսբի» ներկայացումը՝ Ֆ. Ֆիցջերալդի համանուն ստեղծագործության հիման վրա: Տոմսերի արժեքը՝ 6000-7000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որ դեպքում կարող է անձը ստանալ անժամկետ հաշմանդամություն:

Կարեն Պետրոսյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կ. Պետրոսյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ հաշմանդամության խումբը սահմանվում է անժամկետ՝

ա) օրենքով տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց,

բ) վերականգնողական միջոցառումների հեռանկարի բացակայության, հաշմանդամի սոցիալական անբավարարության վերացման կամ նվազեցման անհնարինության դեպքերում, որոնք հետեւանք են անատոմիական արատով կամ անդառնալի կառուցվածքային փոփոխություններով կամ օրգանիզմի օրգանների կամ օրգան-համակարգերի ֆունկցիաների խանգարումով առողջության խաթարմամբ պայմանավորված կենսագործունեության կայուն սահմանափակման,

գ) իրականացված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում, որը բերում է հաշմանդամի մշտական սոցիալական պաշտպանության անհրաժեշտության (առնվազն 7 տարվա ընթացքում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների դիտման պայմաններում, իսկ 2 եւ 4 տարի դիտման պայմաններում համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշման NN 2 եւ 3 հավելվածների),

դ) մեկ ականջի կամ մեկ աչքի տեսողության անվերադարձ բացակայության դեպքում:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ 1-ին խմբի հաշմանդամությունը սահմանվում է երկու տարի ժամկետով, 2-րդ եւ 3-րդ խմբերի հաշմանդամությունը՝ մեկ տարի ժամկետով, իսկ «Հաշմանդամ երեխա» կարգավիճակը՝ երկու տարի ժամկետով կամ մինչեւ 18 տարին լրանալը:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպիսի տուգանքներ են նախատեսված արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելու եւ տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելու համար:

Իրինա Առաքելյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելն ու տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելն առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով (այսինքն՝ մեկ միլիոն դրամ):

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերը նախապես համաձայնեցվում են պետական հրդեհային հսկողության մարմինների հետ: Հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերով չսահմանված, հրդեհային անվտանգության ապահովման առանձին լուծումներ պահանջող հարցերի վերաբերյալ եզրակացություններ է տալիս պետական հրդեհային հսկողություն իրականացնող մարմինը (այն է՝ ՀՀ ԱԻՆ պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչությունը):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Անձրեւի եւ չդադարող ծափերի ներքո Երեւանում կայացավ Full Moon Fest 2024-ը, որը հյուրընկալել էր Outlandish, Vintage, 5Sta Family, Banderos, Reincarnation խմբերին եւ D'Litte-ին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+11+ 17	+27 + 30
Կոտայքի լեռներ	+ 10 + 13	+24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21	+30 + 33
Գեղարքունիք	+ 7 + 11	+24 + 28
Լոռի	+ 9 + 14	+25 + 28
Տավուշ	+ 14 + 19	+29 + 33
Արագածոտնի լեռներ	+ 7 + 9	+23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20	+29 + 33
Արարատ	+ 19 + 21	+34 + 36
Արմավիր	+ 18 + 20	+34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10	+24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 19	+33 + 35
Սյունիքի հովիտներ	+ 18 + 21	+32 + 36
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16	+25 + 28
ԼՂՀ	+ 12 + 15	+24 + 26
Երեւան	+ 19 + 22	+ 34 + 37

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*